ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/5

ք. Երևան «21» «02» 2018թ.

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Մ. Մինասյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Ներսիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների (Ծառայության տեղեկատվական ներքին պորտալի և Հայաստանի ազգային արխիվ համակարգերի սպասարկման ծառայություններ) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 22000000 (քսաներկու միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը.

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն	«ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ
ՀԿՀՀ 02505511	ք.Երևան, իր. հասցե՝ Կոմիտասի պ. 25/2,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	բն. 20,
Հ/Հ 900011474278	հեռ. 094 94 55 88
	ՀԿՀՀ 00142638
	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
	Հ/Հ 193005463438010 0
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«21» 02 » 2018թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍՄՊՀ ՄՄԾՁԲ – 18/5 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
h/h	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	Մատուցման	
						Հասցեն	Ժամկետը
1	72261160-1	**Նախաբան** Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություններն իրականացվելու են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ՀՀ ԱՍՀՆ) սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում: Նախագծի շահառու կողմ է հանդիսանում Ծառայությունը, որը աշխատակազմի աշխատանքների արդյունավետության բարձրացման, ռազմավարական որոշումների կայացման գործընթացի բարելավման և ծառայությունների մատուցման արդյունքում պետք է իրականացնի Ծառայության տեղեկատվական ներքին պորտալի (այսուհետ՝ Պորտալի) և «Հայաստանի ազգային արխիվ» համակարգի հետագա արտադրական շահագործումը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին N 665-Ն որոշման համաձայն՝ կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու կամ այլ դեպքերի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտով սահմանված արխիվային տեղեկանքներ կամ արխիվային տվյալներ (տեղեկություններ) պարունակող այլ փաստաթղթեր քաղաքացիների կողմից չներկայացնելու դեպքում արխիվային փաստաթուղթը «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից ստանում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ համապատասխան հարցում կատարելու միջոցով: Ո կատարումն 2014 թվականի հունվարի 30-ի ՀՀ կառավարության նիստի արձանագրության 24-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում արխիվային գործի բարեփոխումների իրականացման հայեցակարգի» 30-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին N 665-Ն որոշման դրույթների ԱՄՆ ՄԶԳ կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրի և ՀՀ	դրամ	22000000	1	Ք.Երևան, Նալբանդյան 13	**Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև՝ 14.12.2018թ**

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համագործակցության շրջանակներում մշակվել և ներդրվել է «Հայաստանի ազգային արխիվ» տեղեկատվական համակարգը, որը հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային եղանակով իրականացնել տեղեկատվության փոխանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ պետական արխիվի միջև:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013 թվականից Ծառայությունում շահագործվում է Պորտալը, որից օգտվում են 623 աշխատակիցներ և «Հայաստանի ազգային արխիվ» տեղեկատվական համակարգի աշխատանքը սերտ կապված է Պորտալի հետ, ինչպես նաև հիմնական տարբերակների շահագործմանը զուգահեռ լուծվում են շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրները, բարելավվում և արդիականացվում են բիզնես գործընթացներն ապահովող առկա գործիքները, ապա անհրաժեշտություն է առաջացել դիտարկել այս երկու համակարգերը, որպես մեկ ամբողջություն:

Անհրաժեշտությունը

Ներկայումս Ծառայությունում օգտվողների համար շահագործվող Պորտալը հանդիսանում է տեղեկատվության հասանելիության միասնական օղակ: Պորտալը հանդիսանում է հստակ մոդուլավորված և ստանդարտիզացված գործիք, որը օժտված է արտաքին համակարգերի հետ ինտեգրվելու և հաղորդակցվելու մեխանիզմ: Այն հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային եղանակով հասանելիություն ստանալ պահանջվող տեղեկատվությանը, ինչը թույլ է տալիս իրականացնել ճկուն կառավարում և գործընթացների վերահսկողություն: Պորտալը միավորվելով առկա և նոր մոդուլներին, ինչպես նաև ծրագրային այլ լուծումներին ապահովում է վեր հասանելիություն պահանջվող տեղեկատվությանը և տեղեկատվական պահոցներին:

Պորտալի բաժիններն են՝

- Անձնական տվյալներ.
- Կայքի կառավարում.
- Հայտարարությունների անկյուն.
- Հեռախոսագիրք և էլ.փոստի տեղեկատու.
- Հաղորդագրությունների կառավարում.
- Մարդկային ռեսուրսների կառավարում.
- Նամակագրության առցանց վերահսկում.
- Տեղեկանքների տրամադրում.
- Փոխադրամիջոցների հայտերի կառավարում.
- Օժանդակման կենտրոն.
- Ժամանակի կառավարում.
- Բիզնես գործընթացների կառավարում.
- Հաշվետվությունների կառավարում.
- Մատակարարման շղթայի կառավարում.
- Որոշումների կայացման աջակցման կառավարում.
- «Նպաստ» համակարգի կառավարում:

2017 թվականի հունվարի 1-ից Ծառայությունում շահագործվում է «Հայաստանի ազգային արխիվ» տեղեկատվական համակարգը, որի

		բաժիններն են՝ • Ստացվածներ • Ուղարկվածներ • Հաշվետվություններ: Նոր օրենքների, օրենսդրական ակտերի և ՀՀ կառավարության որոշումների ի հայտ գալու պարագայում Պորտալի և «Հայաստանի ազգային արխիվ» համակարգի հիմնական տարբերակներում նախատեսվում է իրականացնել համապատասխանեցում և փոփոխությունների իրականացում: **Նպատակը** Սույն տեխնիկական բնութագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել Պորտալի և «Հայաստանի ազգային արխիվ» համակարգերի հիմնական տարբերակների շահագործումը, շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծումը, արդիականացման բիզնես գործընթացներն ապահովող առկա գործիքների բարելավումը և զարգացումը: Պորտալը և «Հայաստանի ազգային արխիվ» համակարգերը պետք է ապահովվեն քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացումը, որը հնարավորություն կընձեռի բարելավել բիզնես գործընթացների և ֆինանսական ծախսերի արդյունավետ կառավարումը՝ ապահովելով լավագույն ռազմավարական որոշումների ժամանակին կայացումը: **Համակարգի սպասարկման աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջները** Սպասարկման ծառայություն մատուցող ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Պորտալի և «Հայաստանի ազգային արխիվ» համակարգերի սպասարկման աշխատանքները պետք է իրականացնի այդ նպատակով մշակված Օժանդակման կենտրոն բաժնի՝ «Փոփոխության հայտ» ենթաբաժնի միջոցով, որը հնարավորություն է ընձեռում ինքնաշխատ եղանակով հաշվառված ի հայտ եկած ծրագրային խնդիրները, համակարգերի չնախատեսված անհրաժեշտ փոփոխությունները և հիմնական տարբերակների սպասարկման համար նախատեսվող աշխատանքները փոխանցել (ուղարկել) սպասարկման ծառայություններ մատուցող համապատասխան Ընկերություն տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեներով՝ հաշվառված աշխատանքի կատարումն ապահովելու նպատակով: Ընկերությունը Համակարգի սպասարկման աշխատանքները համակարգելու և իրականացնելու նպատակով պետք է հատկացնի ներկայացուցիչ՝ սպասարկման համակարգող գրավոր տրամադրելով Ծառայությանը նրա անունը, ազգանունը, հայրանունը, էլեկտրոնային փոստի ոլորտն և հեռախոսահամարը: Սպասարկման համակարգողը պետք է՝ • Համակարգերի շահագործման ընթացքում առաջացած տեխնիկական հարցերի վերաբերյալ տրամադրի խորհրդատվություն (հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով): • Իրականացնի Ծառայության աշխատակազմի կառուցվածքային					

		և տարածքային ստորաբաժանումներում համակարգերի շահագործման ընթացքում առաջացած և համակարգի միջոցով ուղարկված տեխնիկական խնդիրների լուծում. • Այլ: **Աշխատանքների ներկայացում** Ծառայության Տեղեկատվական տեխնոլոգիաների և ռիսկերի կառավարման վարչությունը ի հայտ եկած խնդիրների, համակարգում չնախատեսված անհրաժեշտ փոփոխությունների և առկա համակարգերի հիմնական տարբերակների սպասարկման համար նախատեսվող աշխատանքները հաշվառում է Օժանդակման կենտրոնի «Փոփոխության հայտ» ենթաբաժնում, որը հնարավորություն է ընձեռում ինքնաշխատ եղանակով այն փոխանցել (ուղարկել) Ընկերության կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով՝ հաշվառված աշխատանքի կատարումն ապահովելու նպատակով: **Աշխատանքների իրականացում** 1. Տվյալների բազաների պատճենահանում (database backup), վթարների դեպքում վերականգնում: 2. Տեղեկատվության ապահովման անվտանգության և գաղտնիության սկզբունքների ապահովում: 3. Այլ գերատեսչություններից և սոցիալական ոլորտում առկա տեղեկատվական շտեմարաններից ստացված տվյալների հասանելիության ապահովում «Հայաստանի ազգային արխիվ» համակարգում: 4. Այլ տեղեկատվական շտեմարաններից (բնակչության պետական ռեգիստրից, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից, սոցիալական այլ տեղեկատվական շտեմարաններից) ստացված տվյալների կիրառման ապահովում «Հայաստանի ազգային արխիվ» համակարգում: 5. Համակարգերի շահառուների սպասարկման արդյունավետության բարձրացմանն ուղված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծրագրային միջոցների կիրառման ապառովում, մասնավորապես քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների և կից ներկայացված փաստաթղթերի հաշվառման ապահովում ՍԱՊԾ-ի ստորաբաժանումներում անկախ քաղաքացու հաշվառման հասցեից, դիմումատուին պատասխանի տրամադրում անկախ հաշվառման հասցեից, 6. Պորտալի «Նամակագրության առցանց վերահսկում» բաժնում մուտքագրված հարցումների ինքնաշխատ եղանակով «Հայաստանի ազգային արխիվ» համակարգ տեղափոխում և էլեկտրոնային եղանակով հարցման պատասխանը ստանալու հնարավորության ապահովում 7. Պորտալի «Տեղեկանքների տրամադրում» բաժնի լրամշակում: 8. «Հայաստանի ազգային արխիվ» համակարգում ապահովել՝ • Հաշվետվություններ ենթաբաժնի լրամշակումը, • Նոր դերերի ավելացումը, • Օգտագործողի տրխարինումը, • Կազմակերպություններ հատվածի լրամշակումը, • Շահառու էջի ստեղծումը: 9. Նոր օրենքների, օրենսդրական ակտերի և ՀՀ կառավարության					

		որոշումների ի հայտ գալու պարագայում առկա համակարգերի հիմնական տարբերությունների համապատասխան փոփոխություններ: 10. Համակարգի հիմնական տարբերակի ընթացիկ սպասարկում, շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծում, խորհրդատվության տրամադրում, ինչպես նաև Ծառայության կողմից առաջադրված անհրաժեշտ աշխատանքների իրականացում՝ համաձայն Օժանդակման կենտրոն բաժնի՝ «Փոփոխության հայտ» ենթաբաժնում հաշվառված ժամկետների և առաջնահերթությունների: 11. Համակարգերը շահագործող մասնագետների ուսուցում, ըստ պահանջի և անհրաժեշտության: 12. Համակարգերի օգտվողների ձեռնարկի և տեխնիկական այլ փաստաթղթերի թարմացում (ըստ պահանջի և անհրաժեշտության): **Իրականացված աշխատանքների ընդունում** Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ Ընկերությունը Ծառայություն է ներկայացնում հաշվետվություն՝ ուղեկցող նամակով, և տվյալ ամսվա ընթացքում ստացված արդյունքներով (անհրաժեշտության դեպքում նաև արտաքին կրիչով), իսկ առնչվող փաստաթղթերը՝ թղթային տարբերակներով: Ծառայությունից ստացված որական եզրակացության հիման վրա Ընկերությունը Ծառայություն է ներկայացնում հանձնման – ընդունման արձանագրությունը, հարկային հաշիվը և ակտը երկուական օրինակներով:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն
ՀԿՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474278

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ
ք.Երևան, իր. հասցե՝ Կոմիտասի պ. 25/2, բն. 20,
հեռ. 094 94 55 88
ՀԿՀՀ 00142638
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930054634380100

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«21» 02 » 2018 թ. կնքված
ՀՀ ԱԱՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության ոլորտում վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	72261160-1	ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ		3667400	3667400	9167400	9167400	9167400	14667400	14667400	14667400	22000000	22000000	22000000	22000000

*/Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով,

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԱՀՆ սոցիալական ապահովության
պետական ծառայություն
ՀԿՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011474278

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ
ք.Երևան, իր. հասցե՝ Կոմիտասի պ. 25/2,
բն. 20,
հեռ. 094 94 55 88
ՀԿՀՀ 00142638
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930054634380100

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«21» «Մ.Հ.» 2018 թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ԱԼՊՈ ՍՄՍՁՊ 18/5 ծանրագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ

Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրույթ գրած N հաշիվ ապրանքագիրը, կազմելիս սույն արձանագրությունը հետևյալ մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Ծառայության նկարագրությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	նախնական ցուցանիշ		կատարման ժամկետ		Գնագոյացման եղանակը (գումարը ամբողջ դրամ)	Վճարումն ըստ փուլերի (գնումը կնքելու և ժամկետ կատարելի)
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
անվանում, անուն	անվանում, անուն
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված 3.1
«21» 02 2018թ. կնքված
ՀՀ ՈՍՏԻ ՄՍՊԾ ՄՍԾՁԲ-18/5 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________ի
(Պատվիրատուի անվանումը) (Կատարողի անվանումը)

(այսուհետ՝ Կատարող) միջև 20__ թ. ____________-ին կնքված N ____________
(պայմանագիրը կնքելու ամսաթիվը) (պայմանագրի ծածկագիրը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__ թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ։

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան

01.02.2018թ

<<Էլեկտրոնային կառավարման և փաստաթղթաշրջանառության համակարգ /Տեղեկատվական ներքին պորտալ/>> բացառիկ իրավունքի սկզբունքով փոխանցելու վերաբերյալ

<ՍՄԱՐԹՈՒԵՅ> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ասլանյանի /այսուհետ՝ հեղինակ/ մի կողմից և <ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ> ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Կ. Ներսիսյանի /այսուհետ՝ գործընկեր/,միասին կոչվեցին կողմեր, և կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Հեղինակը գործընկերին բացառիկ իրավունքի սկզբունքով փոխանցում է <<Էլեկտրոնային կառավարման և փաստաթղթաշրջանառության համակարգ /Տեղեկատվական ներքին պորտալ/>> ծրագրային համակարգը օրենքով նախատեսված պայմաններով օգտագործելու համար:

1.2 Հեղինակը երաշխավորում է, որ հանդիսանում է Օբյեկտի նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատերը, և չի խախտել երրորդ անձանց իրավունքը:

1.3 Սույն պայմանագիրը ուժը պահպանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Համաձայն սույն պայմանագրի Հեղինակի կողմից Գործընկերոջը փոխանցվում են համակարգի նկատմամբ բոլոր իրավունքները

ա) համակարգն օգտագործել Գործընկերոջ նախընտրած անվան ներքո

բ) իրականացնել համակարգի սպասարկում արդեն ներդրված վայրերում

2.2 Գործընկերը համակարգն օգտագործելու ընթացքում պարտավորվում է պահպանել հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանել համակարգն այլ անձանց ապօրինի օգտագործումից:

3. Պայմանագրի լուծարումը և փոփոխումը

3.1 Փոխադարձ գրավոր համաձայնության դեպքում Կողմերը կարող են վաղաժամ լուծարել սույն պայմանագիրը:

3.2 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր և պատշաճ ձևով ստորագրվեն Կողմերի կողմից:

4. Վեճերի լուծման կարգը

4.1 Բոլոր վեճերը և տարաձայնությունները , որոնք կապված են կողմերի սույն սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հետ լուծվում են բանակցությունների միջոցով:

4.2 Բանակցությունների միջոցով վեճը չլուծելու դեպքում վեճը լուծվում է դատական կարգով՝ դատարանի կողմից:

5. Եզրափակիչ դրույթներ

6.1 Բոլոր այն հարցերը, որոնք կարգավորված չեն սույն պայմանագրով կարգավորվում են ՀՀ օրենսդրության համապատասխան:

6.2 Սույն պայմանագիրը կազմված է 2 հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Գործընկեր	Հեղինակ
«ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ	«ՍՄԱՐԹՈՒԵՅ» ՍՊԸ
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վաղարշյան 12ա,203 սենյակ	հասցե՝ ՀՀ, ք Երևան, Աիարոնյան 44
ՀՎՀՀ՝ 00142638	ՀՎՀՀ՝ 00881715
Տնօրեն	Տնօրեն
/Ա. Ներսիսյան	/Ս.Ապանյան
Կ. Տ.	Կ.Տ.

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ
ԿԱՌԱՎԱՐՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ARMAUTHOR"
Non-governmental collective
management organization of authors'
rights and related right

"АРМАВТОР"
Общественная организация
по коллективному управлению
авторскими и смежными правами

N 07/12
31.01.2014թ.

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՈՒՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱԳԻԿ ԷԴՈՒԱՐԴԻ
«ՍՄԱՐՏ-ՏԵԽ » ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Հասցե՝ ք.Երևան, Հայաբյան 22ա/17
Հեռ. /060/ 44-16-90, 44-16-90
Անձնագիր՝ ԲԱ 0013003,001.05.11.20012թ.

ԱՍԼԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ
«ՍՄԱՐԹՈՒԵՅ» ՍՊԸ-ի տնօրեն
Հասցե՝ ք.Երևան, Սիարոնյան 44
Հեռ. /077/ 071-071
Անձնագիր՝ AM 0327971,010.09.06.2011թ.

ՀՀ «Հայհեղինակ» կազմակերպությունը տեղեկացնում է, որ Գագիկ Խաչատրյանի և Սամվել Ասլանյանի կողմից ներկայացված՝

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ /ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՊՈՐՏԱԼ/ »

անվանումով համակարգչային ծրագիրը ի պահ է վերցված կազմակերպությունում 2014թ. հունվարի 29 –ին 08/ 3124 թվի ներքո:

«ՍՄԱՐՏ-ՏԵԽ » ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Գ.Խաչատրյանի և «ՍՄԱՐԹՈՒԵՅ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ս.Ասլանյանի հավաստում են որ իրենք հանդիսանում են վերոնշյալ ծրագրի ճկատմամբ իրավատերերը, ինչպես նաև, որ ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են, համապատասխանում են իրականությանը և այլ անձանց իրավունքներն իր կողմից չեն խախտվել:

Որևէ անձ, ով գիտակցաբար կեղծիք է թույլ տալիս նյութը ի պահ հանձնելու ընթացքում, կենթարկվի պատասխանատվության օրենքով սահմանված կարգով /Հիմք՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդ.65-69/:

Համակարգչային ծրագրի մեկ օրինակը պահվում է կազմակերպությունում փակ ծրարով:

ՏՆՕՐԵՆ Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, 0009 Երևան, Կորյունի փող. 19ա: Հեռ. 52 63 93, Հեռ./Ֆաքս. 52 94 92
Республика Армения, 0009 Ереван, ул. Корюна, 19а. Тел. (+374 10) 52 63 93. Факс (+374 10) 52 94 92
19a Koryun str., 0009 Yerevan, Republic of Armenia. Tel.: (+374 10) 52 63 93. Tel/ Fax: (+ 374 10) 52 94 92
E-mail: international@armauthor.am, info@armauthor.am